ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, Արարատ. Հայոց անմահության խորհուրդը, Ե., 2008, «Տիգրան Մեծ» հրատ., 96 էջ + 114 լուսանկար:

Հայաստանի Հանրապետության ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը հեղինակ է հայոց պատմությանը, ժողովրդագրությանը, տեղագրությանն ու պատմաաշխարհագրությանը նվիրված մեկ տասնյակ աշխատությունների, որոնց գիտագործնական նշանակությունն առավել է մեծանում, քանի որ ուղեկցվում է անմիջականորեն պատմական Հայրենիքի տարածքներն այցելելու և տեղում հետազոտելու հետ: Այդ ուղևորությունների տրամաբանական շարունակությունը դարձան 2007 թ. օգոստոսի 10-ին՝ հայ ժողովրդի համար բախտորոշ Սևրի դաշնագրի օրը, Արարատ լեռան 5165 *մ* բարձրության դժվարահաս գագաթին ոտք դնելը և «*Արարատ. Հայոց անմահության խորհուրդը*» գիտահանրամատչելի աշխատության և համանուն պատմավավերագրական ֆիլմի ծնունդը:

Աշխատությունը բաղկացած է հինգ գլուխներից, որոնք երկուսն էլ նվիրված են հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակին (1809 թ.) և Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի հետ Խաչատուր Աբովյանի՝ Արարատի գագաթը բարձրանալու 180-ամյակին (1829 թ.) և բացվում են մենագրության ու սցենարի հեղինակ Աշոտ Մելքոնյանի իմաստալից խոսքերով. «Ամեն մի ժողովրդի կյանքում ազգային խորհրդանիշներն ունենում են իրենց ուրույն տեղը, դերն ու նշանակությունը: Դրանք հաճախ խտացնում են տվյալ ազգի նկարագիրը, մարմնավորում հայրենիքի կերպարը, իմաստավորում նրա գոյակերպը: Հայ ժողովրդի պարագայում բազմաթիվ խորհրդանիշների մեջ առանձնանում է Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթ Արարատը, քանզի այն նվիրական անուն է ոչ միայն հայության, այլև ողջ քաղաքակիրթ աշխարհի, համայն մարդկության համար՝ իբրև երկիր մոլորակի վրա մարդկային կյանքի վերակերտման խորհրդանիշ:

Պատմական ճակատագրի բերումով Արարատ-Մասիսը ոչ միայն վեհության, անհասանելիության, կատարելության մարմնավորում է, այլև 1915 թ. հայոց մեծ եղեռնից ու հայ ժողովրդի հայրենազրկումից հետո՝ բռնազավթված հայրենիքի և այն նորեն իր արդար զավակներին վերադարձելու համոզումի անկրկնելի խորհրդանիշ, աշխարհասփյուռ հայության միասնականության փարոս» (էջ 8):

Առաջին՝ «*Արարատ-Մասիսի վաղնջական պատմությունից (պատմաաշխարհագրական ակնարկ)*» գլխում հեղինակը լուսաբանում է Արարատ-Մասիս անվանումների ստուգաբանությունը՝ նշելով, որ «…Արարատի անվան հետ է կապվում արիական-հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքի խնդիրը: Բառի հիմքում ընկած է Հայկական ողջ լեռնաշխարհում մշտապես հանդիպող արիական մայր ժողովրդի ինքնանվանման արմատը՝ *արը*: …Նրանից է ծագում առաջին հերթին մեր երկրի *Ար-մենիա* ՝արի, ազնվազարմ ու քաջ մարդկանց երկրի անունը և նրա խորհրդանիշ Արարատի՝ Արարչի կողմից արարված լինելու գաղափարը» (էջ 9, 10-11):

Հեղինակը ներկայացրել է Նոյյան տապանի մասին աստվածաշնչային պատմությունը, Արարատ լեռան հետ կապված ժողովրդական առասպելներն ու Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» մեզ հայտնի Արտավազդ Ա արքայի շղթայվելը Մասիսի վիհում, հանգամանորեն անդրադարձել է լեռան և հարա-

կից տարածքների աշխարհագրական տեղագրությանն ու բնակլիմայական մանրամասերին, կենդանական ու բուսական աշխարհին, բնակչությանն ու պատմական հուշարձաններին, հայ և օտար պատմիչների վկայություններին և այլն (էջ 11-17):

Երկրորդ՝ *«Աստվածընտրյալ լեռան անհաղթահարելիության խորհուրդը. Արարատը հաղթահարելու փորձեր (IV դար - XIX դարի առաջին քառորդ)»*գլխում հեղինակը գրել է. «Վաղնջական ժամանակներից Արարատ լեռան անզուգական գեղեցկությունը հմայել է մարդկանց, նրա գագաթին գտնվող Նոյյան տապանը շարժել հատկապես քրիստոնյա աշխարհի անսահման հետաքրքրությունը, հավերժական սպիտակատես ու անհաս գագաթն իրեն ձգել համարձակ ճանապարհորդներին»(էջ 18): Ա. Մելքոնյանը պատմական ժամանակագրությամբ ներկայացրել է հայ և օտար հիշատակողների (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ և այլք) վկայությունները Արարատ լեռ բարձրանալ ցանկացած և ան-հաջողության մատնված նախաձեռնողների շարքը՝ սկսած IV դ.՝ հայոց Տրդատ Գ Մեծ թագավոր, Հակոբ Մծբնեցի հայրապետ, IX դ.՝ բրետոնացի ուխտավոր Ֆրոդմոնդ, 1255 թ.՝ ֆրանսիացի ճանապարհորդ Ուիլյամ Ռուբրուք, 1318 թ.՝ կաթոլիկ հոգևորական Օդորիկոս Պորդենոնե, 1403-1406 թթ.՝ Իսպանիայի թագավոր Հենրի Գ, 1670 թ.՝ Սդիյուս, 1701 թ.՝ Տուրնեֆոր, 1720 թ.՝ ռուսական կայսր Պետրոս Մեծի արշավախումբ, 1820-ական թթ.՝ Բայազետի Բահլուլ փաշա և այլք (էջ 19-28): Փաստորեն, հին և միջին դարերում Սրբազան լեռ բարձրանալու նպատակով գործադրված բոլոր փորձերը ձախողվել են կամ՝ չսկսված, կամ՝ կես ճանապարհից, բնակլիմայական խիստ ցրտաշունչ պայմանների և անմատչելի տեղանքի պատճառով, քանի որ լեռը «…մեջտեղից մինչև կատարը կատարելապես զառիվայր է և ծածկված սառույցով» (էջ 28):

Անհասանելիությունը պատճառ է դարձել ժամանակակիցների մեջ Արարատի մասին ինչպես անհավանական ու առեղծվածային, նույնպես և իրական ու խորհրդավոր պատկերացումների արմատավորմանը: Այնպես որ. «…դարեր շարունակ սրբազան լեռը նվաճելու գաղափարը յուրատեսակ ձևով ընկալվել է որպես բաբելոնյան աշտարակաշինությանը հավասարազոր, Արարչին ուղղված վտանգավոր նոր մարտահրավեր»(էջ 20):

Ա. Մելքոնյանը ի մի է բերել և ներկայացնել տարբեր ժամանակներում, տարբեր անձանց կողմից Արարատի մասին թողած ուշագրավ ու բնութագրական հիշատակությունները, որոնք առավել հասկանալի են դարձնում սրբազան լեռան առեղծվածային, բայց և իրական էությունը, ինչպես՝ «Արմենիայի՝ այդ երկու գագաթների վրա գտնվում են Հայաստանի թագավորների շիրիմները՝ իրենց գանձերով: Դրանք միտումնավոր կախարդված են, որպեսզի անկարելի լինի դրանց վրա բարձրանալը» (XIII դ., արաբ հեղինակ Շահաբադդին), «Հայաստանի կենտրոնական մասում վեր է խոյանում մի հսկա, մեծ և բարձր լեռ, որի կատարին, ասում են, գտնվում է Նոյյան տապանը: …Լեռան գագաթին այնքան մշտական ձյուն կա, որ ոչ ոք չի կարող բարձրանալ, որովհետև ձյունը երբեք չի հալչում, և հարատևորեն ավելանում է նոր տեղումներից» (1271 թ., Մարկո Պոլո) և այլն:

«Նոյ նահապետից հազարամյակներ անց՝ Արարատի գագաթին. Ֆրիդրիխ Պարրոտ և Խաչատուր Աբովյան» գլխում նկարագրված է Դորպատի (այժմ՝ Տարտու, Էստոնիա) համալսարանի պրոֆեսոր Ֆ. Պարրոտի և նրա արշավախմբի դեպի Արարատ կատարած պատմական առաջին հաղթական վերելքը: «1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով Երևանի խանության՝ Ռուսաստանին անցնելուց հետո ռուս գիտնականներն անմիջապես ձեռնամուխ եղան ինչպես ողջ Արևելյան Հայաստանի, այնպես էլ բիբլիական Արարատի գիտական հետազոտությանը» (էջ 29),- գրում է Ա. Մելքոնյանը: Ֆ. Պարրոտի

արշավախումբը, 1829 թ. սեպտեմբերին ժամանելով Հայաստան, ապա Ս. Էջմիածնում հանդիպելով Մայր Աթոռի թարգման, 20-ամյա դպիր Խ. Աբովյանին և հաշվի առնելով վերջինիս «հայերենի, ռուսերենի, պարսկերենի ու թուրքերենի իմացությունը և Արարատ բարձրանալու բուռն ցանկությունը», նրան ևս ընդգրկել է իր խմբի կազմում (էջ 29-30): Մեկ տասնյակից ավելի անդամներ ունեցող արշավախմբում էին կայսերական ուսանողներ, զինվորականներ, ինչպես նաև Ակոռի գյուղից մի քանի տեղաբնիկ ուղեկցորդներ: Ֆ. Պարրոտի արշավախումբը, սեպտեմբերի 12-ին և 18-ին երկու անհաջող վերելքներ իրականացնելուց հետո, սեպտեմբերի 27-ին կարողացել է հասնել Արարատի նվիրական կատարին: Իր տեսածը նա հետևյալ կերպ է նկարագրել. «Գտնվում էի թեթևակի ուռուցիկ, համարյա թե խաչաձև մակերեսի վրա՝ երկու հարյուր քայլ պարագծով, որի եզրերը զահավեժ իջնում էին ամեն կողմ, առանձնապես արևելք և հյուսիս-արևելք: Հավերժական կարծր սառույցից, առանց որևէ ընդհատող ժայռի կամ քարի, այդպիսին էր ծեր Արարատի արծաթե գագաթը» (էջ 34), իսկ Արարատի երկու գագաթների միջև՝ ձնածածկ խոռոչի մեջ էլ պիտի որ լիներ Նոյյան տապանը: Հոկտեմբերի 27-ին Ֆ. Պարրոտի խումբը բարձրացել է նաև Փոքր Մասիսի գագաթը (էջ 34-35): Նա իր «Ուղևորություն դեպի Արարատ» (Բեռլին, 1834, էջ 60-61) գրքում նկարագրել է այդ դժվարին վերելքները:

Չորրորդ՝ «*Նոր արշավախմբեր՝ դեպի Արարատ (XIX-XX դարեր)*» գլխում Ա. Մելքոնյանը գրում է. «Ֆրիդրիխ Պարրոտի և Խաչատուր Աբովյանի փառահեղ վերելքով բացվեց Արարատի պատմության նոր դարաշրջանը: Եկան այլ արշավախմբեր, որոնք հաղթական վերելքների մատյանը հարստացրին նոր էջերով: …Աստվածաշնչյան Արարատի մասին արդեն ավելի հաճախակի էին գրում աշխարհի թերթերը, աճում էր վեհապանծ լեռը տեսնել ցանկացողների հետաքրքրությունը» (էջ 40, 41):

Այնուհետև հեղինակը ներկայացրել է XIX դ. անձնական նպատակներով Արարատ բարձրացածների տարեգրությունը. 1834 թ.՝ Թիֆլիսի հոգևոր սեմինարիայի ուսուցիչ Կուզմա Սպասսկի-Ավտոնոմով, 1835 թ.՝ Անդրկովկասում հաստատված գերմանացի գաղթական Կարլ Բյոհրենս, 1845 թ.՝ գերմանացի ճանաչված գիտնականներ, Հայկական լեռնաշխարհի գիտակներ Մորից Վագներ և Հերման Աբիխ, վերջինս կրկին նաև՝ 1846, 1850 թթ., 1946 թ.՝ անգլիացի Հենրի Դենբի Սեյմուրի արշավախումբ (էջ 40-43):

Ա. Մելքոնյանը նշում է, որ XIX դ. կեսերից բացվել է Արարատի գիտական հետազոտությունների դարաշրջանը: Այսպես, 1850 թ. օգոստոսի 6-ին գնդապետ Իոսիֆ Խոձկոյի 70 հոգանոց արշավախումբը, «մեկ շաբաթ մնալով գագաթի շրջանում, …երկրաբանական և օդերևութաբանական արժեքավոր հետազոտություններ» է կատարել (էջ 40), 1856 թ. հունիսի 29-ին մայոր Ռոբերտ Ստյուարտի գլխավորած անգլիական արշավախումբը Արարատի գագաթ է բարձրացել լեռան հարավարևմտյան լանջով՝ Հին Բայազետի կողմից, որը, ավելի կարճ և անհամեմատ մատչելի՝ մեղմաթեք և պակաս սառցաշերտ ուղի է: Նպատակակետին չեն հասել 1868 թ.՝ Դ. Ֆրեշֆիլդը, 1871 թ.՝ Գ. Ռադդեն, 1872 թ.՝ Մ. Թիլմանը: Հայասեր քաղաքական ու գիտական գործիչներից հիշաժան են 1876 թ. հաջող վերելք իրականացրած անգլիացի պետական գործիչ, իրավաբան, պատմաբան, Անգլո-հայկական ընկերության հիմնադիր նախագահ Ջեյմս Բրայսը, որը հետագայում հրատարակել է իր «Անդրկովկասն ու Արարատը» (1877) մենագրությունը, ինչպես նաև իռլանդացի հայագետ, ճանապարհորդ, փաստաբան Հենրի Լինչը (1893 թ.), որը բարձրացել է նաև Հայկական լեռնաշխարհի այլ գագաթներ՝ Սիփան, Բյուրակն, Աբուլ, Նեմրութ, ապա հրատարակել «Արմենիա» (Լոնդոն, 1901) երկհատոր արժեքավոր աշխատությունն ու «Հայաստան» քարտեզը: Արարատ են բարձրացել նաև ռուս լեռնագնացների արշա-

վախմբերը (Դ. Մորդովցև՝ 1882 թ., Ե. Մարկով՝ 1888 թ., Ա. Պաստուխով՝ 1892, 1893, 1894 թթ.), իսկ 1890 թ.՝ նաև առաջին կանայք՝ Ջուլի Լեքլերե և օրիորդ Մոսոկևիչ (էջ 40-47):

XX դ. նշանավորվել է հայազգի լեռնագնաց-հետազոտող արշավախմբերի կազմակերպմամբ: Այսպես՝ 1902 թ. Զիգվարդի հետ մասնակի վերելք է իրականացրել մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանը, 1903 թ. Ա. Էվանգուլյանցի արշավախումբն առաջին անգամ Արարատի վրա է տեղադրել օդերևութաբանական կայան, ապա բարձրացել նաև Փոքր Մասիսի գագաթը (էջ 47):

1933 թ. ամերիկացի Քարվեթ Ուելսի և 1936 թ.՝ նորզելանդացի Հարդուիք Նայթի արշավախմբերին հաջորդել են 1940-1950-ական թթ. բազմաթիվ մասնակի ու լրիվ վերելքներ՝ ինչպես արկածների սիրահարների կողմից, այնպես էլ նորագույն տեխնիկայի (ուղղաթիռներ, նկարահանումներ տիեզերքից, զանազան գիտափորձեր) կիրառությամբ: Շրջադարձային էին 1952 թ. սկսյալ ֆրանսիացի բասկ Ֆերնան (Ֆերդինանդ) Նավարայի դեպի Արարատ իրականացրած մի շարք ուղևորությունները, երբ 1955 թ. վերելքի ժամանակ նա սառցադաշտի մեջ հայտնաբերել էր ավելի քան մեկ մետր երկարության գերան և թուրքական ոստիկանության ստուգումներից խուսափելու նպատակով, այն երեք մասի բաժանելով, հասցրել եգիպտական ու իսպանական հետազոտողներին, որոնք էլ պարզել էին դրա՝ շուրջ 5 հազ. տարվա, այն է՝ ջրհեղեղի ժամանակներին պատկանելը: 1966 թ. Արարատի վրա իր գործունեությունն է սկսել ամերիկյան «Հնագիտական հետազոտությունների հիմնադրամը»: 1970-1980-ական թթ. ուշագրավ ուսումնասիրություններ են կատարել Նոյյան տապանը հայտնաբերելու նպատակով ստեղծված «Սուրբ երկրի առաքելություն» կազմակերպությունը, «Արարման հետազոտությունների ինստիտուտը» և այլ հաստատություններ: Վերջին տասնամյակներին արևմուտքի գիտնականների հետ համատեղ թուրքական կառավարությունը ևս սկսել է ֆինանսավորել նմանօրինակ ծրագրեր (էջ 47-51):

Հեղինակն անդրադարձել է նաև Արարատի հետ կապված հետաքրքրաշարժ պատմական այլևայլ փաստերի՝ ինչպես XVIII դ. Ռուսաստանի կայսրության հովանավորության ներքո հայկական պետություն ստեղծելու դեպքում ապագա Հայաստանի զինանշանի կենտրոնում Արարատ լեռը տեղադրելու՝ ռուսաց Եկատերինա Բ կայսրուհու մտադրությանը (էջ 26), 1840 թ. Ակոռիի ավերիչ երկրաշարժին, որին զոհ էր գնացել գյուղի գրեթե ողջ բնակչությունը (էջ 41-42), Հայաստանի 1-ին և 3-րդ, ինչպես նաև՝ 2-րդ հանրապետությունների զինանշաններին ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի և նկարիչ Հակոբ Կոջոյանի, ապա՝ Մարտիրոս Սարյանի կողմից Արարատի պատկերման տարբերակներին (էջ 47) և այլն:

Գրքի վերջին՝ *«2007 թվականի օգոստոսի 10-ին՝ Արարատի գագաթին (Հայ պատմաբանի տպավորություններից)»* գլխում Ա. Մելքոնյանը, համառոտ ակնարկով տվել է 1921 թ. թուրքական «գերության» մեջ հայտնված Արարատի պատմությունը՝ միաժամանակ ներկայացնելով արդեն մեր օրերում Արարատի գագաթ հասած հայրենակիցներին. 1986 թ. օգոստոս՝ Համլետ Ներսիսյան, Մասիս ու Գրիգոր Բարսեղյաններ, 1992 թ. սեպտեմբեր՝ Ալեքսանդր Աղաբաբյան, Գրիգոր Տատուրյան, Ալեքսանդր Մայիլյան և Հայկ Տոնոյան, 2000 թ.՝ Սերգեյ Գայֆաջյան, որն Արարատի գագաթին բարձրացրեց ՀՀ պետական դրոշը, 2001 թ.՝ Պարույր Հայրիկյան և Հրայր Բազե Խաչերյան, Հարություն և Սոնա Արմենյաններ և այլք (էջ 53-55):

Գրքում Ա. Մելքոնյանը ևս մի հիշարժան փաստ է ներկայացրել. 2006 թ. հուլիսին իրականացել է մեր մասիսապաշտ բանաստեղծի՝ Հովհաննես Շիրազի նվիրական փափագը: ԵՊՀ դասախոս Գևորգ Հաճյանը, լեռնագնաց Հրաչ Մակարյա

նը, ինչպես նաև Ալբերտ Տոնեյանն ու Մխիթար Մխիթարյանը մեծն Շիրազի սիրտն ամփոփել են Արարատի գագաթի հավերժական ձյան շերտի մեջ (էջ 55):

Հեղինակը նկարագրել է նաև 2007 թ. Արարատի գագաթը բարձրանալու իր անձնական պատմությունը՝ նախապատրաստությունը, ապրումներն ու տպավորությունները, որոնք ընթերցվում են հետաքրքրությամբ: Ա. Մելքոնյանի «լուսեղբայր-ուխտեղբայրներն» էին՝ Էլբրուսի գագաթը նվաճած փորձառու լեռնագնաց Սամվել Բարոյանը, Արտակ Հարոյանը, տարբեր մասնագիտությունների տեր գիտությունների թեկնածուներ Լիպարիտ Պետրոսյանը, Խորեն Քոթանջյանը, Վահրամ Մկրտչյանը, Սերգեյ Չաթրչյանն ու Արմեն Հովհաննիսյանն իր որդու՝ ուսանող Ռաֆայելի հետ (էջ 55-74):

Դեպի Արարատ վերելքի օրը խորհրդանշաբար է ընտրել Ա. Մելքոնյանը. այն սկսվել է օգոստոսի 8-ին և ավարտվել 10-ին՝ Սևրի դաշնագրի օրը, որն էլ, ինչպես հեղինակն է նշում, «վերելքի գաղափարական իմաստավորումն էր» (էջ 64): Մոտ մեկ ժամ զրոյից ցածր 9-10 աստիճան ջերմաստիճանի, ցրտաշունչ քամու պայմաններում լեռան կատարին գտնվելու ընթացքում անվախ լեռնագնացներ դարձած հայ գիտնականները «Աստվածընտրյալ վայրում» յուրատեսակ ազգային ծիսակարգ են կատարել համայն հայության ինքնության խորհրդանիշ Արարատին՝ ծածանել են Հայաստանի պետական դրոշը, երգել ու արտասանել «Հայր Մերը», «Մեր Հայրենիքը», «Ես իմ անուշ Հայաստանին», պարել քոչարի, սառցաշերտի մեջ խաչեր դրել, մասունքներ՝ քարեր, սառցակտորներ հավաքել և այլն: Բնութագրական են Ա. Մելքոնյանի՝ հայ ինքնության վերաիմաստավորմանն ուղղված հետևյալ խոսքերը. «…Աշխարհն այսօր էլ Մեծն Արարատի վրա շարունակում է փնտրել Նոյ նահապետի փրկարար տապանը: Մենք՝ հայերս, ճակատագրի բերումով դատապարտված ենք՝ փնտրելու ոչ միայն Նոյյան նավի բեկորները, այլև պատմական ճշմարտությունը՝ մեր բռնազավթված Հայրենիքի խորհրդանիշ լեռան վերադարձը նույնացնելով հրամայականի պես հառնած միացյալ Հայաստանի վերաստեղծման բաղձալի երազանքի հետ»(էջ 74):

Առանձնակի հուզումով է ընթերցվում գրքի հավելված՝ *«Տպավորություններ Արարատից»* բաժինը, որտեղ ամփոփված են Ա. Մելքոնյանի ուխտընկերների խորիմաստ ու տպավորիչ, հայրենասիրությամբ տոգորված գրություններն այդ սուրբ առաքելության մասին՝ «Արարատի գագաթին՝ իմ կյանքի լավագույն պահերից մեկը» (Լիպարիտ Պետրոսյան, էջ 77-79), «Արարատը վկա է…» (Խորեն Քոթանջյան, էջ 80-85), «Այստեղից Հայոց հարցի լուծումը նկատելի է» (Վահրամ Մկրտչյան,էջ 86-87), «Դեռ շատ հայրենասերների կուղեկցեմ գագաթն Արարատի» (Սամվել Բարոյան, էջ 88-91), «Երնե՛կ այդ օրվան» (Արմեն Հովհաննիսյան, էջ 92-94):

Գիրքն ունի հարյուրից ավելի սև-սպիտակ և գունավոր լուսանկարներ, որոնք ներառում են ինչպես պատմական դեմքերի ու իրադարձությունների մասին պատկերներ, այնպես էլ Արարատ լեռան տարբեր տեսարաններ: Մեծագույն հետաքրքրությամբ է դիտվում Ա. Մելքոնյանի հեղինակած «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» ֆիլմը (պրոդյուսեր՝ Խորեն Քոթանջյան, աջակցել է Լիպարիտ Պետրոսյանը), որի սցենարի հիմքում ընկած են համանուն գրքի առանցքային դրույթները: Ֆիլմն իրավամբ իր արժանի տեղը պիտի գրավի հայրենական ֆիլմարտադրության պատմության մեջ՝ դառնալով բիբլիական Արարատի համակողմանի պատմության տարեգրությունը ներկայացնող արժանավոր առաջնեկ:

Ինչպես գրքի, այնպես էլ ֆիլմի ստեղծման համար աղբյուրագիտական հենք են ծառայել Աստվածաշունչ Մատյանը, միջնադարյան հայ և օտար հեղինակնե-
րի հաղորդած տեղեկությունները, դեպի Արարատ արշավների անմիջական մասնակիցների հուշագրությունները, տպագիր մի շարք աշխատություններ, Հայկա-

կան ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության տնօրեն Սամվել Կարապետյանի տրամադրած նյութերը, ինչպես նաև՝ թեմային առնչվող տարբեր փաստալից տեսանյութեր, որոնք տեղ են գտել շարժանկարում: Ֆիլմում թեմային համընթաց և համահունչ ցուցադրված են պատմական գծանկարներ, տարբեր հեղինակների ու արշավախմբի անդամների կատարած լուսանկարներ, որոնց միջոցով առավել պատկերավոր ու ընկալելի է դարձել ներկայացվող նյութը:

Ֆիլմում հնչում են Արարատի մասին Մովսես Խորենացու, Ռաֆֆու, Հովհաննես Թումանյանի, Վահան Տերյանի, Մուշեղ Իշխանի, Ավետիս Ահարոնյանի, Վահան Թեքեյանի, Եղիշե Չարենցի, Անդրանիկ Ծառուկյանի, Պարույր Սևակի, Հովհաննես Շիրազի, Վահագն Դավթյանի և այլոց ստեղծագործությունները, որոնք, ինչպես նաև Ա. Մելքոնյանի կուռ շարադրանքով տեքստը, ներկայացվում են Հայաստանի վաստակավոր արտիստ Սարգիս Նաջարյանի բարձրաճաշակ ընթերցմամբ: Ցուցադրվող նյութն առավել տպավորիչ ու զգայացունց է դառնում ֆիլմում հնչող՝ Կոմիտասի, Մակար Եկմալյանի, Առնո Բաբաջանյանի, Ալան Հովհաննեսի, Ռոբերտ Ամիրխանյանի, Արա Գևորգյանի և այլոց երաժշտության շնորհիվ:

Ֆիլմն ավարտվում է Արարատ լեռան գագաթից պատմաբան Ա. Մելքոնյանի՝ որպես պատգամ հնչող խորհրդանշական և ապրված հետևյալ իմաստալից խոսքերով. «…Ամեն տեսակի դժոխային ճամփաներով անցանք, բայց Հայրենիքի գաղափարը վեր է ամեն ինչից… Մենք ամեն ինչ արեցինք, որ օգոստոսի 10-ին հասնենք և հաղթեցինք… Սա միայն սկի՛զբն է… Այնպես որ՝ Կամք, Հավատք, Հաղթանակ, Հայրենիք…»:

Աշոտ Մելքոնյանի *«Արարատ. Հայոց անմահության խորհուրդը»* աշխատությունը և համանուն ֆիլմը պատմափաստագրական, պատմաճանաչողական, գաղափարադաստիարակչական, ազգային-հայրենասիրական և համամարդկային մեծ արժեք ունեցող նորույթներ են, որոնց գիտագործնական կարևորությունից ելնելով՝ հարկ է դրանք մատչելի դարձնել ինչպես Հայաստանի և Սփյուռքի ընթերցող ու հանդիսատես լայն հասարակայնությանը, նույնպես և թարգմանաբար ներկայացնել օտար հանրությանը:

ԱՎԱԳՅԱՆ Ք. Ռ.
Պատմական գիտությունների թեկնածու